# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 1463 - Ա

## ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասը, նույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, 22-րդ հոդվածի 4-րդ մասը և 25-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ սույն որոշման N 1 հավելվածում ներառված և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին ամրացված գույքը հետ վերցնել և ամրացնել համապատասխան մարմիններին՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ սույն որոշման NN 2, 3, 4 հավելվածներում ներառված և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին ամրացված գույքը նվիրել համապատասխանա-

բար՝ «Կառավարական առանձնատների տնտեսություն», «Սպասարկում», «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություններ), Երևան համայնքին և «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի հետ համատեղ, եռամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրատվության պայմանագրերի կնքումը:

4. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում սույն որոշման N 1 հավելվածում ներառված մարմինների ղեկավարների հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն որոշման 3-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո եռամսյա ժամկետում՝ կազմակերպությունների տնօրենների, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման NN 2, 3 և 4 հավելվածներում ներառված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ